

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՆՎԱԳ

Ս. Գ. Սրապիոնյան

Գրականագիտական քննության համար ընտրվել են բանաստեղծ Վարուժան Խաստուրի հետևյալ ժողովածուները.

- 1) Երկխոսություն, «Սովետական գրող» հրատ., Ե., 1987:
- 2) Փառապսակ, «Նոյան տապան» հրատ., Ե., 1995:
- 3) Ժամադիտակ, «Հայաստան» հրատ., Ե., 1996:
- 4) Առհավություն, «Նաիրի» հրատ., Ե., 1996:
- 5) Սպասում, «Նոյան տապան» հրատ., Ե., 1996:
- 6) Բանականության ողբերգությունը, «Նոյան տապան» հրատ., Ե., 1997: Թարգմանական
- 7) Օմար Խայամ, Ռուբայիներ, «Նոյան տապան» հրատ., Ե., 1993:

1

Այսօր հաճախակի են հիշում տագնապոտ մտքեր գրականության, մասնավորապես պոեզիայի պասսիվության, երբեմն նույնիսկ չգոյության մասին: Մի կողմ թողնելով երեւոյթի վիճելիության, պատճառների ու հավաստիության խնդիրը՝ նշենք, որ դրանում ավելի «մեղավոր» է քննադատությունը իր պասսիվությամբ, քան՝ գրականությունը: Ես չեմ ուզում պնդել, թե մենք գրական «թռիչքի» տասնամյակի ակադեմիայի մի այլ առիթով ասված խոսքերով, «փետուրը փոխելու վրա է», իսկ գրականության թմբիկի մասին պնդումները մտացածին են, ցնորք ու բանդազուշանք՝ ոչ թե այն պատճառով, որ այն պարզապես չի կարող լռել ու չլինել, այլ որ այն իսկապես կա եւ մեր կողքին է:

Ասվածի լավագույն վկայությունն այն գրքերն ու անուններն են, որոնք հրապարակ են իջել վերջին 8-10 տարիների ընթացքում:

Այսպես, 1993 թ. իտալացի բժիշկ Մարիո Կոստուի հովանավորությամբ ընթերցողի դատին հանձնվեցին Վահագն Աթաբեկյանի, Լուսինե Սեյրանյանի, Վահան Անդրեասյանի, Գուրգեն Սարգսյանի, Սարինե Պետրոսյանի բանաստեղծությունների առաջին գրքերը: Զննադատությունը լռեց: Այդ ընթացքում մամուլում եւ առանձին բանաստեղծական գրքերով հանդես եկան հաջիկ Սանուկյանը, Վարուժան Խաստուրը, Անագանքեց մի տեսակ ծուկորեն ու կես բերան: Ու չհասկացվեց՝ նորերի այս ոչ ամբողջական շարքում շնորհիվ հալիներ կա՞ն, թե՞ բառ ու մտքի հետ-սովորական խաղ անողներ են: Մինչդեռ լուրջ ու ծանրակշիռ խոսք էր ենթադրում Վահագն Աթաբեկյանի, Լուսինե Սեյրանյանի, Վարուժան Խաստուրի բանաստեղծությունը: Իսկ հաջիկ Սանուկյանին, իբրեւ որոնումների շրջանից վաղուց դուրս եկած եւ իր բանաստեղծական դեմքն ու դիմագիծն ամբողջացրած, թարմ ու տպավորիչ աշխարհիկ առանձնացող բանաստեղծների, քննադատությունն հատկապես է պարտք:

Հանիրավի լռության մատնվածների մեջ անպայման պետք է առանձնացնել նաեւ Վարուժան Խաստուրի անունը: 1995-1997 թվականների ընթացքում Խաստուրը ընթերցողի դատին է հանձնել բանաստեղծությունների 6 ժողովածու՝ «Երկխոսություն», «Փառապսակ», «Առհավություն», «Սպասում» եւ «Ժամադիտակ»:

Դրանք եկան փաստելու, որ գրականություն է մտնում լուրջ ծիրքեր եւ ասելիք ունեցող բանաստեղծ՝ սեփական խոսքով ու աշխարհով: Լայն է Խաստուրի բանաստեղծական ընդգրկումների ծիրը, աշխարհը՝ բազմազան, թեմատիկ առումով՝ նույնիսկ սովորական: Նա երգում է սիրո, հայրենիքի, կյանքի ու մահվան, ճշմարտության ու մարդկային ցավի մասին, շատ դեպքերում՝ երգը հասցնելով կատարելության:

Առհասարակ բանաստեղծի համար միշտ էլ փորձաքար է քաղաքացիական թեմատիկան, մասնավորապես՝ հայրենիքի թեման: Դեռ 1916 թ. ֆրանսիացի գրականագետ Պոլ Դեֆիդը, խոսելով Սիամանթոյի հայրենասիրական երգերի մասին՝ դրանք համարում է կատարյալ, որովհետեւ նրանցում առկա է մարդկային ապրումը, իսկ հակառակ դեպքում հայրենասիրական թեման՝ իբրեւ բանաստեղծություն, չի կայանալու: Այսինքն՝ հայրենիքի թեման, քաղաքական թեմատիկան, բանաստեղծին պարտադրում են ներքողային-պաթետիկ ոճ, որը բանաստեղծությունը զրկում է զգացմունքից, այն մղում կոպտացման: «Փառապսակը» Վ. Խաստուրի հայրենասիրական երգերի գիրքն է: Շարքում փառաբանվում է հայ ֆիդայական շարժումը՝ սկզբնավորումից մինչեւ մեր օրերը, ներկայացվում հայ մարտիկի հերոսական ոգին ու նվիրումը: Բանաստեղծը նպատակ չունի երգել ազգային տառապանքը եւ ողբերգությունը, գրքի վերնագիրն այլ բան է թե-լադրում՝ «Փառապսակ»՝ փառքի գիրք, հերոսության փառաբանում: Այստեղից էլ՝ հերոսացումի պանծա-ցումը, մեր ազգային-ազատագրական շարժման այն դրվագների առանձնացումը, որոնք հայտնի են իբրեւ լեգենդ՝ հաղթանակների պատմությամբ միասին:

Դու Հայաստան, հայրենիք մեր դրախտավայր,
արքայական մեր անցյալի պատմություն,
մեր ընդվզման անզուգական Ավարայր
եւ հաղթության թռիչք անժիր ու անհուն:

(«Հայաստան»)

Հետաքրքրական է, որ դատելով գրքում զետեղված բանաստեղծությունների գրության թվականներից, դրանք գրվել են (համեմայն դեպս մի սովոր մասը) մինչեւ 1988 թ., այսինքն՝ մինչեւ շարժումը: Ուզում եմ ասել, որ բանաստեղծի հայրենասիրությունը պատեհապաշտական չէ՝ ծնված մոդայամուլությունից: Այն տոհմիկ բազրեւանդու երակներում է, գեմի թելադրանքը, եթե կարելի է այդպես արտահայտվել: Այդ է պատճառը, որ առանձին պատկերներ, բանաստեղծական մտքեր՝ գրված 88-ից առաջ, հնչում են իբրեւ կանխատեսում, իբրեւ բանաստեղծական ներքնատեսություն՝ այնքան անհրաժեշտ ճշմարտությամբ:

Հասարակ, անգամ աննկատելի,
մեր մեջ են ապրում ֆիդայիները.
եւ մեզ ընդվզման պահերին բոլոր
առաջ են մղում ֆիդայիները,-

դեռ 1985-ին գուշակել է բանաստեղծը:

Հայորդին, իբրեւ քնարական հերոսի տեսակ եւ գաղափարատիպ, մեր պոեզիայում բանաստեղծվել է տակավին դարասկզբին, Սիամանթոյի կողմից: Նկատի ունեն «Հայորդիներ» գիրքը: Այդ գիրքը դրսևորվեց նաեւ քիչ ավելի ուշ՝ Ավ. Իսահակյանի «Հայդուկի երգերում»: Ժամանակի պահանջն էր, որ դեռ իրենց կենդանության օրոք լեգենդի վերածված հայդուկները եւ նրանց առաջնորդները չեն ընկալվում սոսկ իբրեւ հերոսներ ու նվիրյալներ: Թե ժողովրդական երգերում եւ թե՛ նրանց նվիրված բանաստեղծություններում նրանք գովերգվում էին իբրեւ գաղափար եւ ոգի, իբրեւ միտք եւ ոգու թռիչք, իբրեւ ցեղային նկարագիր: Այդպես էր ընկալվում օր. Սիամանթոն Անդրանիկին ու Աղբյուր Սերոբին, Խրիմյան Հայրիկին ու հայ ահաբեկիչներին: Ի պատիվ մերօրյա բանաստեղծի, պետք է նշել, որ ինքը դառնում է իր մեծ նախորդների գործի ժառանգորդն ու շարունակողը: Այդպիսի գաղափար ու ոգի է Արաբոյի հրացանը՝ համանուն բանաստեղծության մեջ.

Ու լեռներում թուփչ Սասնա
առնացել է այն իբրեւ բերդ
որոտի մեջ հին կսկիծն էր
Արարատի ալեխոփ,
որոտի մեջ ծավալվում էր
ազատության հզոր մի երթ,
որ հնչում էր սրբազնագույն
Ավարայրի ահեղ ծայնիվ:

Այսպես՝ իբրեւ գաղափար եւ ազգային դիմագիծ կերպավորվում են Աղբյուր Սերոբն ու Սոսե մայրիկը, Գեւորգ Չաուշն ու Անդրանիկը, Ռաֆֆին ու Շահան Նաթալին, մյուս հայրենասերները: Գրքում մտքի եւ զգացումի ներդաշնության ու հղացման տեսանկյունից ամենահաջողված բանաստեղծությունը, ըստ իս, «Անդրանիկի սուրն» է: Պաթետիկան ու ծայնի բարձր տոնայնությունն այստեղ հասցվել են նվազագույնի, միտքը գնում է դեպի ասելիքի խորքերը՝ մակարդակելով ապրումի հետ: Անդրանիկի սուրը մասունք չէ, իր չէ, որ ուրիշ իրերի հետ թանգարանում բազմած, իր կենսագրությամբ հպարտ բարեւի այցելուներին: Այն կենդանի ոգի է՝ խաղաղվելու ու անդորրի կարիքից զուրկ, մորմուռում է ծերուկ Արարատին տալիք պարտքի ու բզկտված Հայքին տրված երդման արանքում:

Ահա թե ինչու՝

Թանգարանում մեր անցյալի ու պատմության,
իբրեւ պայքարածին ազատության հուրը,
իբրեւ չասված Նարեկ մեր գոյության,
տառապում է անվերջ Անդրանիկի սուրը:

Ոգու այս տեսակի ժառանգորդման խնդիրը Խաստուրի գրքի հիմնախնդիրներից է: Բանաստեղծն իրավացիորեն մեր ոգեղեն վերածնունդը կապում է ոչ վաղ անցյալի խոյանքների հետ, որովհետեւ՝

Տարիներ մեր թմրած, թուլացած նյարդերում
ներարկվել է սարսափ եւ ոգու բթացում,
բուրգերի մզլահոտ տեսիլից ահաբեկ
միշտ լինել հանդուրժող եւ քայլել երերում:

Ահա, ըստ բանաստեղծի, ինչի դեմ են մեզ շարունակ ոգեկոչել հները՝ Դրոյի սիրտն ու Գարեգին Նժդե-
հի ոգին, Արամ Մանուկյանն ու Նորերը՝ Վարդան Բախշյանը, Մովսէս Գորգիսյանը եւ ուրիշները:

Ու Նորից, այս էլ որերորդ անգամ, բանածելվում է հաղթանակի մեր ճանապարհը՝

*Մե՛կ ազգ, մե՛կ բռունցք,
մե՛կ սիրտ, մե՛կ հոգի,
լուկ այս է ճամփան մեր հաղթանակի:*

Խաստուրի երկրորդ գիրքը եկավ հավաստելու բանաստեղծի կայացման անդաժողությունը: Ինքնար-
տահայտման հիմնական կերպն այստեղ տեսիլն է՝ իբրեւ վկայություն մեր հայկական բանաստեղծության
տոհմիկ ժառանգորդը լինելու փաստին: Այդպես են ասում, որովհետեւ տեսիլն, իբրեւ գրական հնարանք,
խորթ չէ մեր գրականությանը: Այն մեր գրականության մեջ կիրառվել է՝ սկսած խոր հնադարից, առավել
իզորանալով մեր դարի սկզբին, որովհետեւ կյանքի բարդ շիկացումներում իրականի եւ երեւակայականի
փոխներթափանցումներն առավել հստակման են մղում կենսական ճշմարտություններն, պարզեցնում եւ
բյուրեղացնում դրանք:

Վարուժան-բանաստեղծի աշխարհում նույնպես մղվում է դեպի իրականի եւ երեւակայականի երկ-
վությունից բացազատում, փորձում միափեղկվել ինքնաճանաչման ճանապարհով՝

*Օրերի մեջ հետադարձ ես փնտրել եմ ինքս ինձ,
թվացել է, որ գուցե ես ապրել եմ շատ վաղուց,
ինչ-որ հեռու դարերում կյանքս մաքուր էր, անբիծ,
զի հեքիաթ է օրորում պահը անցյալ, հիմնավորց:*

Ես-ի ճանաչման ընթացքում բանաստեղծը բնականաբար պիտի փորձեր բացահայտել, պարզել ու
հիմք իրեն մեկնաբանել տրված ու անցնելիք ճանապարհի առեղծվածը, հասկանալ բախտով ու ներաշ-
խարհային էներգիայով պարտադրված ուղին:

*Ես անցել եմ բազում ճանապարհներ,
իջեւանել լույսի թերթիկներում,
իմ նզովյալ ծեռքով խավար ըմպել
ու նարեկվել բախտի ճիրաններով:
Արշալույս եմ փնտրել արեգնածին
այս մեղսագործ, ծոված մթադ դարում,
հավատացել ստին, խոսքին մտացածին,
երկրպագել անգամ օտար աստծուն:
Երազել եմ վերջում Նոյի նման
միջակության ծանր քրեղեղից
իմ տապանով ելնել մշուշներից ունայն
ու մերձենալ տիեզերքին անձիր:*

Ճանապարհի հայտնությունը չէր կարող խինդ ու բերկրանքի հետ չբերել նաեւ ցավ ու տառապանք.
չհասկացվելու երկյուղ ու դիմադարձ կանգնելու բնագոյաին մղում: Հասարակության բանաստեղծի հան-
դիպումը միշտ էլ խորթությունից է սկսվում, եւ միշտ էլ խորթությունը ծնում է բախում, բախումը՝ դրամա:
Իսկ դրամայի կրողը միայն բանաստեղծն է՝ անկախ տաղանդի մեծությունից եւ «Նշանի ահագնությունից»:
Այս դրաման հավերժ է, բացառություններ չի ընդունում: Վկա՝ մեր գրականության պատմությունը խորե-
նացուց մինչեւ Կոստանդին Երզնկացի, Սայաթ-Նովայից մինչեւ Թումանյան, Զարենց, Սեւակ: Այդ դրաման
նաեւ մերօրյա է, այն ապրել է նաեւ Նորագույն պոետը:

*Տես՛ք խանկարժ իմ խորքերում հրդեհներ,
անգուգական նվիրումներ կենսախայտ,
անէացած ես քերթեցի կյանք ու սեր,
բայց ամբոխը պմիեց թռիչքն իմ անհայտ,
ու կոտորված կիսաթռիչք, անխնդում
ես ցած ընկա երկնահմա խոյանքից,
ու կոտորեցին թեւս իբրեւ հատուցում
լույսի համար, որ փերթեցի խավարից:*

Ու ինչպես շատ բանաստեղծներ, խաստուրը նույնպես հավատում է երգի հավերժությանը, իր մեծ
նախնու նման փորձում է հաստատել իր «մատյանի հարակայությամբ»:

*Ու թե երգն իմ հանկարծ մարդկանց հոգում վառի
բնության պես գույներ, լույսեր արեգնագահ,
ապա կյանքս տրված անուրջներին, բառին,
կհավերժվի ճշտիվ ու կմնամ անմահ:*

«Առհավություն» գրքի մի կարեւոր, եթե ոչ հիմնական տարերքը, խոհն է: Բանաստեղծը խորհում է ոչ
միայն մարդու եւ աշխարհի, այլեւ ժամանակի ու նրա ճակատագրի, կյանքի ու մահվան փոխկապվածության,
կեցության հիմնախնդիրների, դրանց առեղծվածների մասին: Աշխարհի կամ տիեզերքի դիմագծի փո-
փոխությունը, շեղումները ավանդական ծիլից ծանր անդրադարձներ են ծնում բանաստեղծի հոգում:

*...Ինչ-որ կետից ծնված այս տիեզերքը
սկսել է նորից դառնալ կետ...
Քայքայման քայքայումն է.
տարածությունն ու ժամանակը
ջղածգվում են իբրեւ ափ շարտված ծուկ.
Մոտեցել է արքայությունը կետի:*

Թվում է՝ բանաստեղծություն է ներխուժում հուսալքումն ու հոռետեսությունը, լույսի արագություն
ստացած կյանքում ամեն ինչ վազք է ու ծրագրավորում, որից միայն մարդկայնությունն է դուրս սպրդել:
Հոգեւորի կորուստը անիմաստ է դարձրել գոյութունն իսկ, էլ չկա... մարդը: Ոգեղենի համատարած
ամայությունը հոգու ճիչ է բերում ծնված մահվան սարսափներից:

*Աստվա՛ծ իմ, ո՞ր է մարդը՝
քո, քո իսկ պատկերով...
Ռոբոտներն անգամ ըմբոստացել են
եւ խորենացիներ դարձած բղավում են՝
ողբամ:*

Համատարած քայքայումի ու մահացման ուղիներում բանաստեղծի տենդոտ միտքը հիմք ու հենարան
է փնտրում գոյի հարատեւման համար: Կյանք-մահ զուգորդումների խորհուրդը հետաքրքրել է շատերին,
նաեւ Վարուժան Խաստուրին: Թվում է, թե դրա առեղծվածի՝ մեջ է գոյատեւման բանալին: Իսկ առեղծվա-
ծը հավերժի հայտնությունն է, հավերժը՝ ինքը հողը:

*Վարդի ժպիտները լուսանցիկ, բույրը քնքշապարզ
վերջին հաշվով հող են կամ զգայությունը հողի.
ու բոլոր պատերազմները փառատենչ,
անգամ խնջույքները լուկուլլոսյան
հողի պարարտացումներն են եղել.
եւ այս տողերը, որոնք գրվում են հիմա,
դարձյալ հողածնունդ ուղեղի խաղեր են.
եւ մահն ամենեւին էլ վախճան չէ,
այլ վերադարձ է սկզբին,
ուստի կյանքը՝
շրջազայություն է
հողից դեպի հողը.
եւ պատմությունն էլ ընդամենը
հողագործություն է:*

«Առհավություն» գրքում զետեղված համանուն պոեմն ինչ-որ տեղ կյանքի եւ մահվան փոխկապվա-
ծության, մարդկության հավերժական երթի, չարի ու բարու հարադեւ պայքարի ու մեր ազգային ճակա-
տագրի բարդ տեղաշարժերի խտացման փորձ է: Առանց ճիգի անգամ այստեղ տեսանելի են եղիչե Զարեն-
ցի «Մահվան տեսիլ» պոեմի հետ բազում ընդհանրություններ, մասնավորապես՝ կառուցվածքում: Ստվե-
րը կորցրած քնարական հերոսն անցնում է Տարտարոսի ճամփաներով, Զարենցի քնարական հերոսի
նման հաղորդակցվում դժոխքի սարսափներին, հաղորդակցվում մարդկային ահավոր արատներին ու դժ-
մատեսիլ պատիժներին: Պոեմի թեթեւ ուրվագծված սյուժեն երկշերտ է: Մարդուն անտեսանելիորեն ու-
ղեկցում է Նեռը, որին աստված հանձնարարել է ուսումնասիրել ու կործանել մեղավոր աշխարհը եւ մար-
դուն: Այնքան է աշխարհն ախտավոր մարդն այնքան զազանային ու չնւր, որ Նեռն անգամ անգոր է նրա
չարության հանդեպ: Եվ աշխարհի կործանումից հրաժարվում է Նեռը: Մարդն ինքը Նեռ է ինքնակործան՝
ահա եզրակացությունը:

Չրդեհն արվեստի եւ ծեր գիտության
փորձիկ ճրագ է անհուն օվկիանոս,
դուք զարգացել եք ոճրագործության,
կործանման, մահի ասպարեզներում,
ես հեռանում եմ հավերժ ծեզանից,
իմ միջնորդության կարիքը չկա,
պարտված եմ հզոր ծեր չարությունից,
արդ, մարդանեոն է սոսկալին հիմա...

Պոեմի սյուժետային երկրորդ շերտում հեղինակը փորձում է պատկերել ազգային երթի դանթեական ճանապարհը, նրա ազատության ողջակեզներին եւ նվիրումի ասպետներին, որոնք թեպետ չեն հիշատակվում հականե-հանվանե, բայց անսխալ ճանաչվում են Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Վ. Թոթովենցը, Ձ. Եսայանը եւ մնացած մեծերը: Չեղինակի հղացմամբ՝ Չայոց մեծ «Առավոտի եւ Չարթունքի եւ Արթնացման» քրմերը:

Չետաքրքիր հղացումների գիրք է Վ. Խաստուրի «Ապասում» ժողովածուն: Այն միտում ունի նոր նրբերանգներ ու երաժշտականություն հաղորդել մեր սիրային դարավոր քնարերգության հարուստ ներկայակին: Արդեն նախորդ ժողովածուի «Անրջագույն հեքիաթներ», «Սոնետներ՝ անծրելի աղջկան» շարքերում բանաստեղծը փորձում է ստեղծել սիրո իր կենսափիլիսոփայությունը կամ ավելի ճիշտ՝ ներկայացնել այն: Դատելով բանաստեղծությունների գրության տարբերակից՝ ստեղծագործական կյանքի հենց սկզբում սիրո հավերժական առեղծվածը հանգիստ չի տվել բանաստեղծին: Դեռ 1976-ին, տակավին սկսնակ, Խաստուրի տենչանքները՝ պարզ, միամիտ, նույնիսկ՝ պարզունակ, առնչվում են սիրո հետ.

Ես ուզում եմ,
որ միշտ ժպտաս,
որ չտխրի երբեք
սերը...

Տարիների ընթացքում հասունացող պոետական միտքն անվերջ խորանում է սիրո մեծ ու հավերժական խորհրդավորությունների մեջ. փորձում զգացումը ենթարկել բանականությանը, ընկալել այն իբրեւ շարժում, տալ նրա բացատրությունն իր համար եւ ուրիշների: Եվ թվում է՝ հայտնաբերում է: Վ. Խաստուրի ընկալումներում սերն՝ իր դրսևորումների տարակերպություններով, շարժում է ու ընթացք, եւ նրա ելեւեները մարդկային վարքակերտ զգացումներն են՝ սպասումը, կասկածանքը, թախծը, ներումն ու մերժումը, բաժանումն ու հրաժեշտը, փնտրտուքն ու անակնկալը, ծնվող ու մեռնող ճերմակ երազները: Սերը գույն ունի, ըստ բանաստեղծի, եւ այդ գույնը ճերմակն է: Դժվարածին, փախչող ու անէացող այդ գույնը բերում է զգացումներից ծանրագույնը՝ Սպասումը՝

Չյուն է գալիս -
ես մոտում եմ իմ մրսելուց
եւ հասկանում ներիմաստը
սպասում բառի,
որի հոմանիշը
համբերություն անվամբ
կրծոտում է հիմա իմ աչքերի լույսը:

Ժողովածուի առանձին բանաստեղծություններ մոտ են պոեմին՝ ոչ ծավալով, այլ՝ զգացումների խտությամբ ու ընդգրկումներով: «Վերածնունդ», «Գողգոթա», «Ներում», «Երկվություն» բանաստեղծությունները, կարծում եմ, հենց այդպիսի բանաստեղծություններ են: Հաճախ զգացումը ներկայացվում է պարզ վերապատումի միջոցով, ինչը բանաստեղծությունը կարծես վերածում է թանկային.

Դու քայլում ես փողոցով քո սովորական,
եւ ոտքերիդ արարչական հպումից
մայթերը շնչավորվում են,
աստիճանները լցվում են
երաժշտությամբ տիեզերական,
եւ օդը հագնում է քեզանով,
եւ փողոցը քոն է:

Խաստուրի բանաստեղծական հասունության մի վկայագիրն էլ զարմանալի անձիգ, թվում է՝ թեթեւ գրելն է: Հիմնականում՝ ստեղծագործելով ազատ ոտանավորով՝ միշտ մնում է ներքին հանգի սիրահար, իսկ հանգն ավելի շատ կապում է պատկերի ավարտունության հետ: Վ. Խաստուրին բառերը թեթեւ են տրվում,

իսկ ինքը որոշիչներն ու մակդիրներն է ստեղծում՝ կերտելով նոր հետաքրքիր բառեր՝ հրաշափառությամբ, ժահրաճիտ, շարժաճկուն, մեղսամետ, գոյաշարժում, մեղսամթար, իմաստնակործան, խաբկամրմունջ եւ այլն: Նման բառերն ինքնանպատակ չեն կիրառվում, այլ նպաստում են բանաստեղծական հետաքրքիր պատկերների ստեղծմանը, նաեւ, ինչու՝ չէ, մտածողության ձեւավորմանը: Վկան՝ «Ժամադիտակ» գիրքն է, որ բանաստեղծական եզակի գյուտ է:

Վ. Խաստուրին՝ իբրեւ բանաստեղծ, իհարկե, դեռ անցնելու ճանապարհ ունի եւ չա՛տ: Նրա երգերում դեռ հստակորեն նկատվում են Ե. Չարենցի, Պ. Սեւակի, Հ. Շիրազի, անգամ Սայաթ-Նովայի ազդեցությունները: Հատկապես Սեւակի եւ Չարենցի, որոնք՝ իբրեւ ուսուցիչ, հաճախ նույնիսկ կառուցված միտք ու պատկեր են պարտադրում բանաստեղծին: Բայց ես չեմ ուզում ծանրանալ ազդեցությունների խնդրի վրա, մանավանդ՝ դրանցից ձերբազատվելու պոետական ճիգը չկա: Ես ուզում եմ ավելի շատ հավատալ սեւակյան բնական-օբյեկտիվ-խոհափիլիսոփայական բանաստեղծության շարունակության ու դպրոցի կայացման մտքին, որի լավագույն ներկայացուցիչներից մեկն էլ Վարուժան Խաստուրն է: Ուրեմն ավարտվում են բանաստեղծական որոնումները, եւ Վ. Խաստուրին՝ իբրեւ բանաստեղծ, կարծում եմ, կայացել է: Բարի երթ եւ խաղաղություն ցանկանանք բանաստեղծին:

«Բանականության ողբերգության» Ողբերգական բանականությունը

2

Ո՞վ կհասկանա պոետի ուղին...
Երբ փողոցներում քափառում է նա -
Նրա քեւալոր, ասպդային հոգին
ճախրում է հեռու ասպդային վրա:
Ե. Չարենց

Իսկապես, առեղծվածային է բանաստեղծական աշխարհը: Մանավանդ դժվար է բացատրել գոյավորման ընթացքն ու ամբողջացումը: Այդ դժվարությունն է պատճառը, թե՛ մարդկային մտքի վեհերգությունը, որ օրինաչափ դառնալու վտանգավորության չափ սակավ են ճիշտ ժամանակին ընկալվում ընտրյալները: Եթե դրանց ավելանում են նաեւ նախանձն ու պատեհապաշտությունը, ապա դժվարին է դառնում տաղանդի ուղին: Ինչպես Չարենցի, Սեւակի, Շիրազի, շատերի կյանքում: Նրանց հետ համեմատելու, նրանց կողքին դնելու համար չեմ ասում, բայց այդպես եղավ նաեւ Վարուժան Խաստուրի դեպքում: 80-ական թվականներին նրա ճանապարհը եւս փակեց «սեւ խմբագիրը», չնայած օժտված բանաստեղծին նկատել եւ ապագա էր գուշակել Համո Սահյանը: Մեծ բանաստեղծի իրավագիտությունը հաստատեցին Վ. Խաստուրի՝ միայն վերջերս հրատարակված «Ժամադիտակ», «Առհավություն» եւ «Ապասում» ժողովածուները: Փաստվեց, չվախենանք բառից, տաղանդի հայտնությունը: Ճշմարիտ բանաստեղծին ճանաչելու լավագույն ուղիներից մեկը Չարենցն է եղել:

Ամեն պոետ՝ գալիս՝ իր հետ մի անտես նետ է բերում,
Եվ նետն առած խոհակալած - որս է անում երգերում,
Բայց դառնում է պոետ նա մեծ ոչ թե նետի մեծությամբ,
Այլ նշանի ահագնությամբ, որ հանճարներ է սերում:-

Անշուշտ, դեռ վաղ եւ անպատեհ է խոսել Խաստուրի նշանի առաջնության մասին: Մանավանդ անընթերցասեր եւ ընթերցողազուրկ մեր շուկայական օրերում, եւ շատերը կարող են նույնիսկ կարդացած չլինեն նրան: Ինքը՝ պոետը շատ լավ է գիտակցում եւ լավագույնս է տվել օրերի պատկերը.

Քարանձավալերադարձի քայլերդ է,
քերթության քելեխ.
քաղիանում քանքարի...

Դեռ վա՛ղ է խոսել բանաստեղծի մեծության մասին: Մեր կաղապարված միտքը կարող է ընդվզել, սրբապղծություն համարել «գրնգուն» ու չա՛տ «հայտնի» անուն չունեցող պոետի «նշանի ահագնության» մասին խոսելը: Բայց չնկատել «նշանի» գոյությունը՝ անհնար է: Վկա՝ Վարուժան Խաստուրի «Բանականության ողբերգությունը» պոեմը, որ շնորհալի բանաստեղծի անուրանալի տաղանդի վկայությունն է: Առանց վարանելու կարելի է ասել, այս գիրքը նոր խոսք է հայ պոեզիայի բազմադարյան պատմության

մեջ: Նախ՝ համարձակ մտահաղացմամբ, ձեւի առումով: Իհարկե, ազատ ոտանավորը նորություն չէ մեր բանաստեղծության մեջ: Ավելին, այն դարերի պատմություն ունի, որ ձգվում է Դավթակ Քերթողից, Գրիգոր Նարեկացուց, Ներսես Շնորհալուց մինչեւ Զարեմը եւ Սեւակ: Նորություն չեն նաեւ առձայնությոն ու բաղաձայնությոն: Դրանց անկրկնելի օրինակներն առկա են նույն հեղինակների մոտ: Հիշենք թեկուզ Նարեկացուն:

*Աչքն ծովի ծով ծիծաղախիտ
Ծավալանայր յառաւոտուն:*

Կամ՝ *Շուշանն շաղով լցեալ
Շող շաղով եւ շաղ մարգարտով:*

Նաեւ՝ Զարեմցին՝ *Մառ մորմորում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում,-*

Կամ՝ *Մթնում է, մոտ է մայրամուտը
Մահվան մշուշ է մովում մաղում..* եւ այլն:

Սակայն նշված երեւոյթն առավել բնորոշ է եղել բանաստեղծական տողի, քառատողի, առավելապես՝ բանաստեղծության համար: Վարուժան հաստուրն ընդլայնում է երեւոյթի շրջանակը: Այն դառնում է ձեւամբողջ պոեմի համար, որի կառուցը հայոց այբուբենի կառուցվածքից է բխում: Եվ ոչ միայն: Բանաստեղծում եմ, դժվար չէ հասկանալ այն ահավոր դժվարությունը, որ ծառայել է պոետի առաջ նյութի հաղթահարման ընթացքում:

Առաջին, թուցիկ ընթերցմամբ դա կարող է ձեւապաշտություն թվալ, պոետական քնահաճույք կամ ինքնատիպ երեւալու մարմաջ: Բայց դա առաջին հայացքից միայն: Մինչդեռ ուշադիր քննությունը ցույց է տալիս, թե ի՞նչ կատարյալ ներդաշնություն է ստեղծվել ձեւի եւ բովանդակության միջեւ, ինչպիսի՝ խորք է բերել տառերի փիլիսոփայության խաստուրյան յուրօրինակ ըմբռնմամբ: Մեր գրերի հայտնության պատուիրի մոտեցումն այլ է: Նրա համար հայոց այբուբենի յուրաքանչյուր տառը փիլիսոփայական գերխիտ ընդհանրացում է, մարդն ու՝ աշխարհն իր մեջ կրող, դրանք բացատրելու յուրօրինակ բանալի հանդիսացող խորհրդանիշ: Հենց այս մոտեցմամբ եւս, այս դիրքերից էլ բանաստեղծը փորձում է մեկնաբանել իր ճիշտ է, գալիս է Ուիլյամ Բաթլեր Էյքսփից՝ հետեւյալ ձեւակերպմամբ. «Մենք սկսում ենք ապրել լոկ այն պահից, երբ կյանքն ըմբռնում ենք իբրեւ ողբերգություն...», բայց պոետն արդեն զուտ խաստուրյան ընկալում ու մեկնություն է դառնում:

«Բանականության ողբերգությունը» քնարական պոեմ է: Եվ ժանրով, եւ կառուցվածքով, անգամ վերագրում չի կարելի չնկատել ընդհանրություններ եւ նմանություններ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հետ: Սակայն խոսել պարզապես ազդեցությունների մասին, նշանակում է մեղանչել ճշմարտության դեմ: Ավելի ճիշտ կլինի նշել, որ հաստուրն ընտրել է նարեկացիական ավանդների կիրառումն իբրեւ հնարք՝ ասելիքը տեսանելի դարձնելու, մտահղացումն իրականացնելու համար: Մնացած ամեն ինչում բանաստեղծն ինքնատիպ է, թարմ ու տպավորիչ:

Արդեն նախորդ ժողովածուներում հաստուրի բանաստեղծական խառնվածքի համար բնորոշ է դառնում մի տիրական գիծ: Խոհը: Ստածումի խոհականությունը: Ամեն ինչի՝ իրերի եւ բնության, երեւոյթների եւ կյանքի, մարդու եւ աշխարհի փոխհարաբերություններում Մեծ բանականություն որոնելը: Այն մեկնաբանելու, դրանցում մարդու դերի եւ դրսեւորման կերպերի հայտնաբերման ծգտումը: Այսպես, «Ժամադիտակ» ժողովածուն պոետի մի յուրօրինակ դիտանկյունն է, որով նա փորձում է ոչ թե միայն իմաստավորել հայոց վաղնջական ժամանուկները, այլեւ մեկնաբանել օրվա խորհուրդը, բնության՝ իբրեւ քնահաճ ու լուսաբաղձ էակի կատարելացման ընթացքը: Հազվագյուտ պայծառ ու լավատես է հաստուր-բանաստեղծն այստեղ: Օրն ամբողջությամբ մի լուսալիր տաճար է, ժամերը՝ խորաններ, ուր թագավորում է գեղեցկությունն իր արտասովոր նրբերանգներով: Եթե այդի ժամն է, ապա՝

*Արծաթի մեջ երկնքի
Լույսն է մեղմիվ լվացվում
Եւ գիշերն է թափանցվում
արծաթի մեջ երկնքի,*

Զորացյալի ժամին՝

Դիզվել են լույսի ծալքերը իրար,

Երկարատեսի ժամին՝

դեղձան է հագել երկինք մի պտղունց,

*ժանեկավոր են ամպերը ծերմակ,
երկնի ցնցուղից արեւ է թափվում:*

Այսպես՝ 24 խորան՝ լույսով, գեղեցկությամբ ու ջերմությամբ լեցուն: Թվում է՝ Շնորհալու լուսաբաղձ ու արեւատենչ ոգին է թեւածում բանաստեղծական պատկերներում, մի անկաղապար ու հեթանոս էությունը թրթռում իր անորսալի նրբավորումներով:

Այս փոքրիկ շեղումը թերեւս անհրաժեշտ չլիներ եւ ծանրացնում է գուցե ասելիքի ընթացքը, բայց ուզում եմ դրանով ապացուցել, որ Վ. հաստուրն անհույս հոռետես չէ: Արդեն «Բանականության ողբերգությունը» պոեմի առաջին արձագանքներում կարծես նկատելի է միտումը: Գրականագետ Ս. Արզումանյանն, օրինակ, պոեմը խմբագրելիս ընդհանուր առմամբ ոգեւորել է շահեկան իր խոսքում չի մոռանում նշել, թե հաստուրն ամբողջ պոեմում «... չգում է ծանրագույն այդ (իմա՝ թախծի.- Ս. Ս.) զգացում - գիտակցությունը՝ ճեղքվածք անգամ չթողնելով «այրունուշտ ահից», «բոլորեքյան բռնությունից», «գիշամու գողգոթայից» ազատվելու կամ գոնե պատրանքն ունենալու (Տես Վ. հաստուր «Բանականության ողբերգությունը», Երեւան, 1997 թ., էջ 35):

Ընդհանրության մեջ, անշուշտ, իրավացի է գրականագետը: Բայց միտքը կարող է տիրապետող դառնալ, նույնիսկ հիմք՝ հաստուրի ստեղծագործությունն այսպես լուսաբաղձությունը, կենսախնդիր աղաղակը, որ առկա է պոեմի ենթաշերտերում, յուրաքանչյուր բաժնի տողարանքներում:

Չմոռանա՞նք. հաստուրը ծգտում է հետազոտել Մեծ բնությունը, Մարդկային մեծ կյանքը իր իսկ արարման նախաստեղծ վիճակից, աստվածային որակներից հեռացած աշխարհը:

Հեռացումի գիտակցումը, անշուշտ, պիտի զորացներ թախծի զգացումը, իսկ աշխարհի մեկնության խաստուրյան ըմբռնումը, ինչպես ասացի, պիտի դառնար նրա ողբերգության բանականություն:

*Գոյության թախծը,
թախծը հազարդարյա,
թախծը ժամանակի, տարածության,-
դաժանաբար, մոլի, անագորույն,
իմ մարերն է տանում դեպի կառավանքան,
դեպի մահը բիրտ ու ոչնչացում: (Ընգծումներն իմն են.- Ս. Ս.)*

Փաստորեն բանաստեղծի աշխարհընկալումը ժամանակի պարտադրանքն է, իսկ ժամանակն ու տարածությունը հարաբերական ընգրկումների շրջանակներում են: Ուզում եմ ասել, որ տարածությունը ժամանակի մեջ է, իսկ ժամանակը՝ պայմանական երկփեղկման, այսինքն՝ ժամանակը հավերժի ընթացքն է եւ բանաստեղծի ապրած օրերը միաժամանակ: Ահա թե ինչու թախծը տարածության ու ժամանակի, նաեւ իր օրերի տերն է եւ անվերջավոր:

*Եվ ամենուր, անվերջ թախծն է նույն,
Գոյության թախծը հազարդարյա,
որ տրոփում է կյանքի ընդերքում,
հունդերի մեջ մղման, իմաստնության:*

*... եւ ամենայն սկիզբ ու վերջի միջեւ,-
համատարած, եւ սփյուռ, եւ մշտաբերուն
նույն շքերթն է անհեթեթ,
գոյության թախծը նույն:*

Ինչո՞ւ է այդպես: Ի՞նչն է ընդհանուր առմամբ լուսատենչ ու գեղապաշտ այս պոետական հոգուն մղում դեպի ցավի ու թախծի տիրույթը, իր խոսքերով՝ «բանականության ողբերգությունը»: Մեր ապրած ժամանակը, ավելի ճիշտ՝ նրա բարդությունը: «Անցումային» հորջորջված այս ժամանակը, երբ փոխվում են մարդկային շատ պատկերացումներ, փշրվում շատ գեղեցկություններ, դատարկվում հոգեբանորեն լեցուն շատ տարածքներ: Քաղաքական եւ սոցիալական վիթխարի փոփոխությունները մեծ տեղատվության եւ մակընթացության են ենթարկում նաեւ մարդկային բարոյական եւ հոգեբանական աշխարհը, խտացնում մարդու ահն ու տագնապները անիմանալի գալիքի հանդեպ: Այդպիսի մի ժամանակաշրջանում չէ՞ր արդյոք մորմոքում Թումանյանի հերոսը:

*Մեր հին աղաթից ընկել ենք, զրկվել,
Նորն էլ չգիտենք, թե ինչ է եկել:*

Մեր կյանքի բարոյական, քաղաքական, սոցիալական եւ հոգեբանական բարդ ու հակասական անցումները չէին կարող չազդել մարդկային մտածողության, ամենից առաջ՝ գեղարվեստական մտածողության վրա: Հատկապես՝ բանաստեղծական: Իբրեւ գրական առավել զգայուն ու ճկուն ժանրի, օրերի արծագանքը տրոփում է բանաստեղծության մեջ բոլոր ժամանակներում: Ասվածի վկայությունն է նաեւ Վարուժան Խաստուրի պոեմը:

Պոեմի կենտրոնական հերոսը մարդն է, կամ ավելի ճիշտ՝ նրա հոգու անսովոր փոթորկումները՝ ծնված երազների փշրտուքի անծայր տառապանքից: Մարդը բնության ամենապահպանողական էակներից է: Դժվար է ձեռքազատվում ավանդույթներից ու սովորություններից, եթե դրանք անգամ ժամանակավրեպ են: Դժվարին է դառնում հոգեբանական պատմեղծների հաղթահարման ուղիները, իսկ նորի հաստատումը հաճախ է ընթանում բռնության ճանապարհով, «բարձվում է բանականը»: Օրերի պատկերն է ամբողջացնում Խաստուր-բանաստեղծը.

*Բռնկվել է բամբ եւ բազմաբեղուն
բռնությունը.
բռնությունը բաբախում է բոլորեքյան
բանտեր եւ բազկափարած,
բորբոքում է ու բոր,
բարձվել է բանականը,
բղբջում է բորբոսը,
բառաչ է բզկտման,
բառերը բութ են,
բախտը՝ բոսոր: (Ընդգծումներն իմն են.- Ս.Ս.)*

Դեպի ո՞ւր են մղվում բանաստեղծի մտքերը: Դեպի կյանքը, նրա բարդությունը: Փորձելով ընկալել այդ բարդության խորհուրդը՝ քնարական հերոսը փորձում է լուծել աներեւույթի գաղտնիքները, բացել նրա առեղծվածները, մարդկային բանականությունը հասցնել կենսական ու հոգեբարոյական աղետների մթնոլորտի գիտակցումը եւ նախանշել այն ուղիները, որոնց միջոցով ու շնորհիվ մարդը պիտի դուրս գա հոգե-է բախժի տիրապետության ողբերգականության գաղտնիքը՝ դաշնության մահն ու թաղումը՝ ոչ միայն օրերի, այլ դարերի թվում է՝ հավերժի ընթացքով.

*Դալկացած, դառը եւ դիմափոխ,
դրվել է դարերի դագաղում
դաշնությունը,-
դաշնությունը
դաբեղի դաշտան,
դաշնությունը դատարկ ու դեղին,
դիմացս դոնդող է դաժան,
դամբանում դիակներ դարերի:*

Ողբերգության թանձրացող մթնոլորտը, այսպիսով, պայմանավորված է բանաստեղծական ճանաչողականությամբ: Հենց դրա շնորհիվ է բանաստեղծական ձեւը վերածվել խորունկ բովանդակության: Հոգեկան ներքով, նարեկացիատիպ փոխաբերություն-մակդիրներով, որոնք հստակեցնում են բանաստեղծական դի-«երազը եղերգ է» «գորեղ է գայրույթը» «էության էգնահողն է էգուց» «թախիծը թանձր է ու բույն» «ծանդոց ծոմ է» «հուղարկավորություն է հիշողության հանձարասպանության հմտացումը» «ճեւապաշ-տում է» եւ այլն, եւ այլն:

Բանաստեղծական պատկերների թուլցիկ ու պարզ թվարկումն անգամ ցույց է տալիս, որ պոեմում դարտ ու մեղմ, աստիճանական ընթացքով՝ թվարկումների ճանապարհով: Երեւոյթը, որ հայտնի է տակադեպի դարերի խորքը՝ շառավիղ նետելով նաեւ գալիքին, կամ, ավելի ճիշտ, զգուշացնում գալիքի «ինքնապաշտումն է» ընկալում.

Հոգեբանական բուռն հակասականությունը պարտադրում է ժամանակի բանաստեղծական, նույնիսկ տարօրինակ ընկալում.

ժահրոտ է ժամանակն ու ժանտ...

եւ... կյանքի՝

*Խեղված է խորհուրդը խորին,
խուժանն է խելահեղ խուժում,
խփում է, խեղդում խոհերին,
խառնամբոխ խլիրտով խաղում...
... Կյանքը կրավորվել է կապկացման,
կործանումից կառչել է կատարյալ,
կացիներ են ու կառափնարան,
կալանում է ու կայազոր:*

Թվում է՝ վերնարդկային մի բանականություն անիմանալի ճիգով փորձում է բացել օրերի ու կյանքի սարսափների տարածքը, ապրում անկումների անխուսափելիության ողբերգականությունը: Այլ կերպ ասած՝ բանականության ողբերգությունն աստիճանաբար, համառ ու անբեկանելի ընթացքով վերածվում է իր իսկ բնութագրմանը կամ՝ էության ինքնաբնութագրմանը՝ իբրեւ ողբերգական բանականության: Ողբերգական է բանականությունը, որովհետեւ ծնվում է բարու ու կատարյալի անզորությունից: Նրա բազմածեւությունների համատարած սպանության, մահացման գիտակցումից: Զգացումի իսահակյանական արտասովոր շիկացումը՝ ծնված նյութի հաղթարշավով պայմանավորված ոգու սովի հստակ գիտակցումից, բնորոշ է դառնում նաեւ Խաստուրյան աշխարհին.

*Ոգիներ է որոճում
ոհմակը ողորմելիների.
որկրամոլությունից որժկում է ոչխարահազ.
ոջիլների ոճիր է,
որոգայթման ոստայն,
ոչուփուչի ոգորում.
... որս է ոգեղենության,
ոստան է որդապտույտի,
որակ ողորման,
ոգու ոչնչացում,
ողջագուրում ոչինչին,-
ողջը ոչինչն է որոշում: (Ընդգծումներն իմն են.- Ս.Ս.)*

Խոհերի մռայլության թանձրացումն առավել շիկացման է տանում զգացումը. ժամանակը, դարն ու դրանց միջոցով նաեւ մարդը հայտնվում է բանաքննության ծանր մթնոլորտում՝ մարդկային հոգուն պարտադրելով տերյանական «Չկա ոչ մի սահման դնող պայծառ շող» տողի իմաստության ծանր գիտակցումը: Տիեզերականացող, ահագնացող ցավը ջնջում է առաժնության մարդկային ընկալման բոլոր կերպերն ու սահմանները, այն վերածում Տարտարոսի տեղատարափի, սրիկայության սաստկացումը ծնում է սինթրոնների սքանչալում, իսկ ժամանակը վանականների վտանգատարածման, վարձասեր վարժապետների, վնասաբեր վճիռների, վատնող վարիչների ժամանակն է, վախճանի վիթխարացման ժամանակը: Կուտակվում է վիթխարի էներգիա: Այն իր մեջ կրում է բացառապես բացասական լիցքեր՝ պայմանավորված հենց բանականության ողբերգականությամբ: Բանաստեղծական ոգին կեղեքվում է բազմաթիվ աղետներից. ցնորամտության ցորենի ցանքը, ցեղակցության ցնցոտացումն ու ցեղամերժության ցլամարտը, ուրացողների ուխտագնացությունները, ուշահեղձվող ուղեղները, փողազարության փոթորկումը, փոքրիկության փողփողումը մութ սարսափներ են հաղորդում կյանքին, այն դարձնում են փորձության, փորձերի եւ փորձանքի մի վիթխարի հովիտ, ուր «փերեզակները փնթի եւ փութաջան փշեպսակներ են փաթաթում փրկիչներին»: Անսահմանության ձգտող բացասական էներգիան, որ ձեւավորվել է բանաստեղծի անվերջ որոնումներից, սպառնում է պոետական աշխարհընկալմանը, որը թվում է՝ միհիլիզմ է, ոչնչականություն:

Պոեմի վերջին նվազն անգամ դրա վկայությունն է.

*Քարանձավավերադարձի քայլերգ է,
քերթության քելեխ.
քաղիանում քանքարի.
քացախում քաջության.
քծնության քահանայությունից
քոչել է քնարականությունը,
քիմեռածություն է.
...քարոզությամբ քաղաքագետ քածերի
քանիցս քրքրվում են քարտեզները.
քաղցրահեղձուկ քուն է.*

Իջնում է վարագույրը: Եվ հենց այստեղ ամբողջանում է եւ տեսանելի դառնում երգի գոյավորման ա-
ռեղծվածը: Վարուժան խաստուրն իր երկրի ու ժամանակի տերն է, նրա քաղաքացին: Նրա մորմոքն ու
ժխտողական կիրքը ծավալվում են ցաված սիրուց, մարդու ճակատագրի հանդեպ ունեցած անծայր ան-
հանգստությունից, խորապես մարդկային այն հավերժական ծգտումներից ու տենչերից, որ ծնվում են աշ-
խարհը եւ մարդուն կատարյալ ու անխորտակ տեղում անհրաժեշտության գիտակցումից: Չարիքի, խա-
վարի, բարոյական աղետների, անկումների ու Կյանքի Մեծ Զառսի նկատմամբ նրա անսահման ատելու-
թյան ակունքը Մեծ Սերն է, Սերը մարդու, երկրի, հայրենիքի հանդեպ, որը տեսանելի է դարձնում Արդարու-
թյան, Բարության, Մաքրության եւ Լույսի նկատմամբ պոետական մեծ ճիգը՝ թաքնված երգի ներքին
նրբավորումներում:

С. Г. Срапионян - 1. Симфония феномена; 2. "Трагедия разума" - разум трагедии - В статьях
представлены произведения одного из молодых и интересных лиц нашей поэзии - Варужана Хастура: сборники
стихов "Ожидание", "Атавизм", "Венец славы" и поэма "Трагедия разума". Раскрывается внутренний мир молодого
и многообещающего поэта, восприятие особенностей сосуществования человека и Отечества, своеобразные
комментарии традиционных и современных переживаний армянского народа, связь его поэзии с традициями
армянской и всемирной классикой. Сделано несколько серьезных обобщений, которые могут способствовать
восприятию интересного и внутреннего мира своеобразного и многообещающего поэта.

1960-1980-ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մելինե Գիլավյան

Մանկական գրականությունը, որի զարգացման միտումներն ու օրինաչափությունները պայմանա-
վորված են գրական գործընթացի յուրահատկություններով, ընդհանուր գրականությ ա ն անբաժանելի մա-
սերից մեկն է: Սակայն, լինելով այդպիսին եւ առաջընթացի հիմնական ուղղություններով առնչվելով ժա-
մանակի գեղագիտական միտքը զբաղեցնող խնդիրներին, այն ընդհանուրից առանձնանում է մի շարք յու-
րահատկություններով:

Մանկական գրականության ընթերցողը 3-15 տարեկան մանուկներն ու պատանիներն են՝ նա-
խադրոցական տարիքի երեխաները, կրտսեր, միջին եւ ավագ դպրոցի աշակերտները, եւ նրանց համար
գրվող ստեղծագործություններում սերտորեն ներդաշնակվում են անհատի զարգացման մանկավարժա-
կան ու հոգեբանական առանձնահատկությունները, տարիքային ու մտավոր կարողությունները:

Մանկական գրականության հիմնական նպատակը մատաղ սերնդի գեղագիտական, հայրենասի-
րական, բարոյահոգեբանական դաստիարակության խնդիրներն են, որոնք առանձնահատուկ վերաբեր-
մունք ու լուծումներ են պահանջում: Իր առաջին քայլերին զուգահեռ՝ երեխան սկսում է շփվել իրակա-
նության հետ, փորձում է ճանաչել աշխարհը, գտնել բազմաթիվ «ինչուների» ու «ինչպեսների» պատաս-
խանք: Նրա առաջին օգնականներից եւ խորհրդատուներից մեկը գիրքն է, որը «կազմակերպում է երեխա-
յի հույզերը, պատկերացումները, ձեւավորում նրա գեղագիտական ճաշակը, զարգացնում կամքը,
երեւակայությունը, մշակում եւ հարստացնում լեզուն»:

Մանկավարժահոգեբանական, ճանաչողական ու դաստիարակչական գործոնները մանկական
գրականության մեջ սերտորեն միահյուսվում են գեղարվեստականին, որը դրսեւորվում է պատկերամտա-
ծողության, կառուցվածքային, լեզվաոճական յուրահատկություններով:

Մանկական գրականության մեջ նույնպես «ձնհալի» տարիների առաջընթացի միտումներն առա-
ջին հերթին դրսեւորվեցին պոեզիայում: Այս առումով՝ 1960-1980-ական թթ. մանկական պոեզիան, որը նո-
րովի դիտարկումների ու տեսական ընդհանրացումների լայն հնարավորություններ կարող է ընձեռել, իր
զարգացման միտումների ու առանձնահատկությունների ընդհանուր կերտվածքով դեռեւս կարոտ է հիմ-
նավոր ուսումնասիրությունների:

Հարցի պատմությունն, իհարկե, բուլղորովին էլ խոպան տարածությունից չի սկսվում: Հրապարակի
վրա են Խ. Գյուլնազարյանի, Ս. Լալախանյանի, Լ. Կարապետյանի, Լ. Գալստյանի եւ ուրիշների ուսումնա-
սիրություններն ու հոդվածները, որոնք, սակայն, 1960-80-ական թթ. մանկական պոեզիայի զարգացման
հիմնական ուղղությունների ու միտումների մասին ամփոփ պատկերացումներ չեն տալիս: Այս առումով՝
ցավալի է, որ մեր անվանի գրականագետները չեն անդրադարձել մանկական պոեզիայի հարցերին, այն
դեպքում, երբ նույն շրջանի պոեզիայի ուսումնասիրությունը, շնորհիվ Ս. Աղաբաբյանի, Ա. Արիստակեսյա-
նի, Էդ. Ջրբաշյանի, Հր. Թամրազյանի, Ս. Սարինյանի, Ա. Չաքարյանի, Ս. Արզումանյանի, Լ. Հախվերդյա-
նի, Դ. Գասպարյանի եւ ուրիշների գիտական պրպտումների, պսակվել է լուրջ հաջողություններով: Իսկ
մանկական գրականության հարցերը քննարկվել են միայն դեպքից դեպք կամ առիթից առիթ. մասնուում
տպագրվել են առանձին գրախոսականներ ու հոդվածներ, ծավալվել բանավեճեր այն մասին, թե ինչպի-
սի գրքեր են անհրաժեշտ նախադրոցական, կրտսեր կամ միջին դպրոցական տարիքի ընթերցողներին:
Դրանք իրենց հարցադրումներով ու նպատակադրումներով, երբեմն նաեւ հետաքրքիր դիտարկումներով
հանդերձ, չեն կարող ամփոփ պատկերացում տալ՝ գրական գործընթացի, նրա հիմնական ուղղություննե-
րի, զարգացման միտումների ու առանձնահատկությունների մասին:

Ռուս հայտնի մանկագիր Ս. Մարշալը շատ դիպուկ նկատել է, որ մանկական գրականությունը
նման է չլուսավորված փողոցի. ով ասես մտնում եւ ինչ ասես՝ անում է այնտեղ: Այդ փողոցն ապրում է իր
օրենքներով ու չափանիշներով, ունի իր հեղինակություններն ու շարքայիները, անգամ՝ դասականները,
որոնք արեւի լույսի տակ չեն կարող բավարարել ամենասովորական պահանջներն անգամ:

Նույն վիճակում է նաեւ հայ մանկագրությունը: Կարելի է թվարկել բազմաթիվ «գրողների», որոնք
գրական շուկան հեղեղել են անկիրք ու անարյուն, մանուկ ընթերցողի փտավոր զարգացմանն ու գեղագի-
տական ճաշակի ձեւավորմանը ոչնչով չնպաստող խոտանով:

Այս ամենի կողքին, սակայն, գրվել են իսկապես արժեքավոր ստեղծագործություններ, որոնք ար-
ժանի են ամենալուրջ վերաբերմունքի: Հենց միայն այն, որ այդ թվականներին մանուկների համար գրել
են նաեւ Պ. Սեւակը, Ս. Կապուտիկյանը, Մ. Մարգարյանը, Հր. Մաթեոսյանը, Ռ. Դավոյանը, ինքնին խոր-
հելու, նրանց փորձն ընդհանրացնելու պահանջներ է առաջադրում, պահանջներ, որոնք կնպաստեն մի
կողմից՝ մանկական գրականությանը ներկայացվող նոր չափանիշների մշակմանը, մյուս կողմից՝ ժամա-
նակի գրական ընթացքը նոր հունով տանող մեծ արվեստագետների՝ Պ. Սեւակի, Հր. Մաթեոսյանի ու
նրանց գործընկերների ստեղծագործական դիմանկարի ամբողջացմանը: